ԱԶԳԱՄԻՋՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԷԹՆԻԿ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՆ

(1905-1906 թթ. հայ-թաթարական ընդհարումների օրինակով)

ՎԱՐԴԱՆՅԱՆ Թ. Ռ.

1905-1906թթ. Այսրկովկասում արյունահեղ ազգամիջյան ընդհարումներ ընթացան տարածաշրջանում շերտընդմեջ ապրող հայերի և այն ժամանակ «կովկասյան թաթարներ» անվամբ հայտնի էթնիկ տարրի միջև: Հայ-թաթարական ընդհարումներն ունեցան բավական ուշագրավ հետևանքներ, որոնցից կքննենք ընդհարումներին զուգընթաց թաթար էթնիկ ինքնության ձևավորման ու հավաքական ինքնագիտակցության սկզբնավորման հետ կապված գործընթացները:

Ռուսական կայսրությունում ապրող թաթարների՝ XIX դ. վերջերին սկսված ազգային-ազատագրական պայքարը կրում էր կրթամշակութային բնույթ և հիմնականում ուղղված էր ցարիզմի ազգային քաղաքականության դեմ: Բայց արդեն դարասկզբին Այսրկովկասի թաթար ազգայնականների կոչերում ակտիվանում են հակահայկական տրամադրությունները, երբ ռուսական իշխանություններն ու թաթար առաջնորդները որպես թաթարների թշվառությունների ու զրկանքների հիմնական պատճառ սկսում են ներկայացնել տարածաշրջանում ապրող առավել զարգացած ու առաջադիմող հայերին, որոնք, իբր թե, առաջ են ընթանում հատկապես իրենց հարևան թաթարների հաշվին: Հետզհետե աշխուժանալով, թաթարների ազգային-ազատագրական շարժումն ընդունում է ակնհայտ հակահայկական ուղղվածություն:

Այնուհետև 1904-1905թթ. ռուս-ճապոնական պատերազմը, Ռուսաստանում սկսված բուրժուադեմոկրատական հեղափոխությունն իրենց հերթին նպաստեցին թաթար ազգային շարժման հետագա աշխուժացմանը, որն այդ շրջանում անցում կատարեց որակական նոր փուլի՝ հակակայսերականից դեպի առավել անթաքույց հակահայկական դրսևորումների: 1905թ. փետրվարից սկսած՝ թաթար ազգայնական շարժումը ձեռք բերեց հակահայկական դրսևորում՝ արդեն գործնական իմաստով (հայկական կոտորածները Բաքվում 1905թ. փետրվարի 6-9-ը և հետագայում հայ-թաթարական բախումներն ամբողջ Այսրկովկասում), երբ հայերի ֆիզիկական ոչնչացումն ու ստեղծած նյութական արժեքներին տիրանալը թաթարների համար դիտվում էր որպես միակ միջոց՝ ազգային խնդիրների լուծման ճանապարհին:

Մինչև XX դ. սկիզբը թաթարների շրջանում դեռևս ձևավորված չէր ազգային հավաքական ինքնագիտակցությունը, ինչի մասին վկայում են աղբյուրներն ու բազմաթիվ էթնոնիմների առկայությունը: Ինչպես պնդում է ադրբեջանցի հեղինակ Ա. Ալեքպերովը, «ադրբեջանցի էթնոնիմը բնակչության շրջանում լայն կիրառում գտավ միայն 1936թ. սկսած»[1]: Մինչ այդ, գործածության մեջ էին բազմաթիվ տերմիններ, օրինակ՝ «թուրքեր», «ադրբեջանական թաթարներ», «կովկասյան թուրքեր», «մահմեդականներ» և այլն: Կովկասում հաստատվելու

---

[1] Տե՛ս Алекперов А. К., Исследование по археологии и этнографии Азербайджана, Баку, 1960, с 71.

ժամանակ «ցարական նվաճողները ոչ մի տարբերություն չէին տեսնում ադրբեջանցիների և մյուս ոչ-քրիստոնյա ժողովուրդների միջև: Նրանց համար գոյություն ունեին միայն քրիստոնյաներ և մահմեդականներ»[2]: «Մահմեդականներ» անվանումը մատնանշում էր կրոնական պատկանելությունը, որի մեջ բացի Այսրկովկասի թաթարներից, ներառվում էին, բնականաբար, նաև Կովկասի բոլոր մահմեդականները՝ լեզգիներ, թալիշներ, թաթեր, քրդեր: Միայն XX դ. սկզբին, որպեսզի Այսրկովկասի թաթարներին տարբերակեն Կազանի և Ղրիմի թաթարներից, նրանց սկսեցին անվանել «այսրկովկասյան թաթարներ»: Միաժամանակ, գործածության մեջ էին այլ էթնոնիմներ, որոնք օգտագործվում էին հարևանների կողմից, օրինակ՝ դաղստանցիներն այսօրվա ադրբեջանցիներին անվանում էին «ղզլբաշներ», «ղաջարներ», «փադարներ», Նախիջևանում ապրող զոկերը՝ «քրդեր», հայերը՝ «թուրքեր», իսկ վրացիները՝ «թաթարներ»[3]: Դրա հետ մեկտեղ ներսում գործում էին վարչական անվանումներ՝ ղարաբաղցիներ, ղուբացիներ, բաքվեցիներ, գանձակեցիներ և այլն[4]:

Այսպիսով, թեպետ XIX դ. վերջերից Ռուսաստանի մահմեդականների շրջանում սկսվել էր մշակութային վերածննդի պատմական կարևոր ժամանակաշրջան, այնուամենայնիվ, մինչև 1905թ. Այսրկովկասի թաթարների շրջանում դեռևս ձևավորված չէր ազգային հավաքական ինքնագիտակցությունը, երբ ոչ միայն հարևանները, այլև իրենք իրենց դեռևս հստակ չէին տարանջատում մյուս մահմեդականներից: Թաթարներն իրենց զգում էին որպես ամբողջ մահմեդական աշխարհի մի մասնիկը կամ Ռուսաստանի թյուրքալեզու բնակչության բաղկացուցիչ մասը: Հետևաբար, կարելի է ասել, որ XX դ. սկզբին Այսրկովկասի թաթարների շրջանում նոր-նոր սկիզբ էր առնում էթնիկ ինքնահաստատման գործընթացը: Այդ է վկայում նաև Ա. Յունուսովը, որը հիշատակելով երկու թյուրքական ցեղերին՝ ղարափափախներին և թարաքյամաներին, նշում է, որ վերջիններս միջնադարում հաստատվել էին Հարավային Կովկասում և եկել են Միջին Ասիայից: Հեղինակը գրում է. «Լեզվական և մշակութային իմաստով նրանք շատ մոտ են Ադրբեջանի որոշ թյուրքական ցեղերին, և օրինաչափ է, որ հետագայում նրանք կազմեցին ադրբեջանական էթնոսի մի մասը»[5]: Այդ պատճառով էլ ռուսական փաստաթղթերում XIX դ. – XX դ. սկզբի

Տե՛ս Дубровин Н., Войны и владычество русских на Кавказе, т. 1, кн. 2, СПб., 1871, с 23.

Տե՛ս Алекперов А. К., նշվ.աշխ., էջ 73:

Թեպետ պատմական ներկա փուլում նման տրոհվածությունն արդեն վերացել է, այնուամենայնիվ, այսօր ևս առկա են որոշ խնդիրներ՝ կապված ադրբեջանցիների ինքնության հետ: Հ. Խառատյանը, էթնիկ անունների կայացման ընթացքն ու կայացած անունները իրավացիորեն դիտարկելով որպես էթնոգենետիկ և քաղաքական պատմության հետևանք, նշում է. «...Ղարաբաղյան հակամարտության երկու կողմերից մեկը, որպես լիարժեք էթնիկ հանրություն, գտնվում է կայացման փուլում, ինչն արտահայտվում է նրա անվան բազմազանության և ոչ միարժեք ընկալման մեջ: «Ազեր» անունը, որ գուցե «Ադրբեջան» անվան կրճատ ձևն է և շրջանառության մեջ է մտել վերջին 10 տարիներին, թերևս գոյություն ունեցող և կիրառվող անունների շարքում ամենաքիչը պիտի հավակնություն ունենա Ադրբեջան-Ազերբեջանի տարածքի թրքալեզու բնակչության հավաքական էթնոնիմը լինելու: Այն խորթ է ինչպես իրենց՝ Ադրբեջանի տարածքի թրքալեզու բնակչությանը, այնպես էլ հարևաններին, որոնք նրանց շարունակում են կոչել XX դ. սկզբին արդեն ավանդականացած անուններով» (տե՛ս Լրաբեր հասարակական գիտությունների, 1998, No 1, էջ 222):

Տե՛ս Юнусов А., Месхетинские турки: дважды депортированный народ, Баку, 2000, с 43.

«ղարափափախները» և «թարաքյամաները» հաճախ անվանվում էին «թաթարներ», այսինքն՝ «ադրբեջանցիներ»: Հեղինակն այս երկու ցեղերին համարում է թյուրքալեզու բնակչության կազմում առանձին էթնիկ խումբ և XIX դ. – XX դ. սկզբին «թաթարներ» անվանելը համարում է չփոթմունք: Այստեղից կարելի է նորից նույն հետևությունն անել, որ եթե այս ցեղերին ուսումնասիրողներն առանձին էթնիկ միավորներ էին համարում, և նրանք մասնակցել են ադրբեջանցիների ազգային հավաքական ինքնության ձևավորման գործընթացին, ինչպես նշում է Ա. Յունուսովը, ապա նշված ժամանակահատվածում դեռ ադրբեջանցիների՝ որպես առանձին էթնոսի ձևավորման գործընթացը չէր ավարտվել:

Այդ են վկայում նաև թաթար մտավորականների կողմից դարասկզբի գիտական և քաղաքական մամուլում մահմեդականների, այդ թվում նաև Կովկասում ապրող թաթարների, ազգային պատկանելության վերաբերյալ ծավալված ակտիվ քննարկումները: Այսպես, ծայրահեղ պանթուրքական Ջ.Վելիգովը, նպաստակ ունենալով չեշտադրել բոլոր մահմեդականների արյունակցական կապը, քննադատում էր շրջանառության մեջ եղած ցեղանունների բազմազանությունը կամ, ինչպես ինքն է ասում, «խառնաչփոթությունը»: Ջ.Վելիդովը գտնում էր, որ ցեղային ինքնորոշման խնդիրը մահմեդական աշխարհում ունի իր բարդությունները և, որպես իր տեսակետի ապացույց, բերում էր հետևյալ օրինակը. «Փոքր Ասիայի և Ռումելիայի թուրքերին մենք անվանում ենք ուղղակի թուրքեր, իսկ իրենք իրենց՝ օսմաններ: Նրանք վիրավորական են համարում թուրք անվանումը, և անգամ գոյություն ունեն օսմաներենով ասացվածքներ՝ «թուրքը կարող է դառնալ գիտնական, բայց ոչ երբեք՝ մարդ» կամ «Տվեք թուրքին իշխանություն և նա կսպանի իր սեփական հորը»[6]: «Այսպիսով, - շարունակում է հեղինակը, - մենք օսմաններին թուրք ենք անվանում, իրենք իրենց՝ օսմաններ, պարսկերեն խոսող տաջիկներին անվանում ենք սարտեր, բայց չգիտես ինչու, թուրքերեն խոսող ադրբեջանական թուրքերին անվանում ենք պարսիկներ»[7]: Հեղինակը որպես ստեղծված իրավիճակի հիմնական պատճառ է մատնանշում «մահմեդականների ընդհանուր մտավոր հետամնացությունը»[8]:

Այժմ անդրադառնանք 1905-1906թթ. հայ-թաթարական ընդհարումների և թաթարների շրջանում էթնիկ ինքնագիտակցության սկզբնավորման գործընթացների փոխազդեցության խնդիրներին: Թաթար վերնախավը հայ-թաթարական ընդհարումների վերաբերյալ ուներ իր ուրույն տեսակետը, ըստ որի, այդ ընդհարումները, իրենց հետ բերելով բազմաթիվ մարդկային կորուստներ ու տնտեսական ավերածություններ, այնուամենայնիվ, չափազանց օգտակար են, քանի որ ունեն հզոր ստեղծարար ուժ և նպաստում են թաթար ազգի ինքնագիտակցության զարթոնքին: Այս մշակված տեսության գոյության մասին են վկայում թաթար ծայրահեղ պանթուրքական գործիչ Ա. Աղաևի հետևյալ խոսքերը. «Ընդհարումները զարգացնում են թաթարների մեջ ազգային գիտակցությունը, որից թաթար ժողովուրդը զուրկ է եղել բոլոր ժամանակ,... այդ ընդհարումների շնորհիվ է, որ Անդրկովկասի բոլոր թաթարները սկսել են

[6] Велидов Дж., Наш народ и наше племя (Шура, Оренбург, 1912, № 1, с. 9).

[7] Նույն տեղում, էջ 9.

[8] Նույն տեղում, էջ 9-10:

հասկանալ, թե իրենք պատկանում են մի ցեղի և կապված են միմյանց հետ սերտ կապերով, թե ոչ մի տարբերություն չկա բոլոր թաթարների միջև, լինեն նրանք Նախիջևանում կամ Բաքվում»[9]:

Ինչպես իրավացիորեն նշում է Ա. Նալչաջյանը, «Միջէթնիկական կոնֆլիկտների հետևանքներից մեկն այն է, որ գրանց շնորհիվ...մարդիկ սկսում են ավելի լավ գիտակցել, թե ինչ էթնոսի են պատկանում, ինչով են տարբերվում մյուս էթնոսների անդամներից, ովքեր են իրենց բարեկամներն ու թշնամիները: ... Եթե մենք որևէ էթնոսի ծագումն ու զարգացումը դրական երևույթ ենք համարում, ապա այդպիսին պետք է համարենք նաև նրա ինքնագիտակցության զարգացումը, որը էթնոգենեզի կարևորագույն հոգեբանական արդյունքներից մեկն է: Քաղաքական գործիչներից շատերը լավ են հասկանում ազգի համախմբման համար ընդհանուր թշնամու գոյության նշանակությունը և նույնիսկ հնարում են այդպիսի թշնամի, երբ նա իրականում չկա: Թշնամական վերաբերմունքը հանգեցնում է էթնոսի ինքնագիտակցության ուժեղացմանը, խորացնում է ազգակիցների բախտի համար պատասխանատվության զգացումը, սեփական անցյալն ու ցեղային արմատներն իմանալու ցանկությունը»[10]: Ակնհայտ է, որ թաթարների շրջանում նման ազգային համախմբման գործընթացներ էին ընթանում անցյալ դարի սկզբին:

Կովկասյան թաթարների շրջանում ազգային համախմբման գործընթացները սկզբնական փուլում կրում էին կրթամշակութային և էթնոկրոնական բնույթ, իսկ 1905-1906թթ. հայ-թաթարական ընդհարումների ընթացքում շարժումը ձեռք բերեց էթնոտարածքային և քաղաքական բնույթ: Մանրամասն ուսումնասիրելով Ռուսաստանի մահմեդականների շրջանում բարեփոխումներին ուղղված շարժումները՝ Ս. Իսխակովը հաստատագրում է. «Ռուսաստանի մահմեդականների շրջանում XIX դ. երկրորդ կեսից ծավալված բարեփոխումներին ուղղված շարժումը 1904թ. վերջից - 1905թ. սկզբից թևակոխեց զարգացման քաղաքական փուլ»[11]: Այս կարծիքի հավաստումն է նաև հայ-թաթարական ընդհարումների ընթացքում աստիճանաբար թաթարների մեջ ձևավորվող էթնիկ տարածքային կենտրոնացման գաղափարը: Այսպես, Ս.Պետերբուրգի ինքնավարակալների համագումարում 1905թ. աշնանը թաթարների ներկայացուցչի զեկուցումը վկայում է սոցիալ-ֆեդերալիստների «Հեյրաթ» կուսակցության ձևավորման մասին, որին անդամակցում են բոլոր ազգայնականները: Այդ զեկուցման մեջ ասվում էր. «Սոցիալ-Ֆեդերալիստների «Հեյրաթ» կուսակցությունը իր ծրագրում առաջադրում է Ադրբեջանի տարածքային ինքնավարության խնդիրը, որը ներառում է ամբողջ Բաքվի նահանգը, Ելիզավետպոլի նահանգի 2/3-ը, Երևանի նահանգի կեսը և Թիֆլիսի նահանգի մի մասը, որը սահմանակից է Ելիզավետպոլի նահանգին, Զաքաթալայի շրջանի մի մասը: Ադրբեջանի թուրքերի բոլոր ներքին հարցերը պետք է լուծվեն Ելիզավետպոլի նահանգում հրավիրվող Սեյմի կողմից»[12]: Իհարկե, փարիսեցիորեն նշվում էր, որ Ադրբեջանում ապրող բոլոր

---

[9] Գյուլխանդանյան Ա., Հայ-թաթարական ընդհարումները, հ. 1, Փարիզ, 1933, էջ 175-176:

[10] Տե՛ս Նալչաջյան Ա. Ա., Էթնիկական հոգեբանություն, Ե., 2001, էջ 71-72: История национальных политических партий России (Материалы международной конференции, М., 1997, с 215)

[12] ՀՀ Պատմության կենտրոնական պետական արխիվ, ֆ. 113 (Канцелярия наместника Его Величества на Кавказе, оп. 3, д. 67, Петиция азербайджанских турок, л. 11):

ազգերը կօգտվեն հավասար իրավունքներից[13]: Հատկապես հետաքրքիր է զեկուցման մեջ նշված Ինքնավար Ագրբեջանի տարածքի խնդիրը: Թաթարները չէին սահմանափակվում Բաքվի նահանգով: Նրանք փորձում էին ընդգրկել Թիֆլիսի նահանգի մի մասը, որը վրացիներն ամբողջությամբ իրենց պատմական հայրենիքն էին համարում, նաև Գանձակի նահանգի մեծ մասն ու Երևանի նահանգի կեսը, որոնք հայերի պատմական հայրենիքն են:

Փաստորեն, 1905թ. սկսած, կապված հայ-թաթարական ընդհարումների հետ, Այսրկովկասի թաթարների շրջանում սկսվեց ինքնահաստատման նոր փուլ՝ Այսրկովկասում տարածքային կենտրոնացման միջոցով հայրենիքի փնտրտուքի ժամանակաշրջան:

Մ. Վարանդյանը, խոսելով հայ-թաթարական ընդհարումների հետևանքների մասին, նույնպես նշում է Այսրկովկասի թաթարների շրջանում ազգային ինքնագիտակցության աճի և էթնոգենեզի այլ կարևոր գործընթացների սկզբնավորման մասին. «Իրական -սփոփիչ կետեր ևս կան, - գրում է նա, - այդ մոայլ արտասվելի համայնապատկերին վրա: Իրական- նույնիսկ մեր հետամնաց, խավարակուռ դրացիին համար: Պատերազմը մեծ զարկ տվավ թուրք համայնքի ընդհանուր հառաջադիմության, որ բարիք մըն է և թուրքի, և հայու համար, բարիք մըն է ընդհանուր, համակովկասյան ճակատագրի տեսակետով: Այդ անվերջ. արյունահեղ բախումներուն մեջ մեր անգիտակից հակառակորդը զգաց ամեն քայլափոխի հայու մրցման ուժը, անոր մտավորական, կազմակերպչական և նույնիսկ ռազմական ավելի չեչտված կարողությունները և արտակարգ եռանդ ծավալեց իր սեփական մշակույթը բարձրացնելու, իր գրականության զարկ տալու, դպրոցներ և ազգային այլ և այլ հաստատություններ հիմնելու: Վաղ թե ուշ, անտարակույս, ուսման ու ճշմարիտ քաղաքակրթության յուրացումն է, որ պիտի հանե բազմամիլիոն թրքությունը արևելյան անշարժության ճահիճներեն և պիտի բերե տևական խաղաղություն Արևելքի, Կովկասի բազմաչարչար ժողովուրդներուն»[14]:

Այսպիսով, 1905-1906թթ. հայ-թաթարական ընդհարումներն Այսրկովկասում մեծապես խթանեցին թաթարների շրջանում էթնիկ ինքնագիտակցության և ազգային հավաքականության աճին:

Թաթար առաջնորդները նաև փորձում էին հայ-թաթարական ընդհարումների միջոցով թուլացնել կամ մեղմացնել այն տարբերությունը, որն առկա էր տարածաշրջանի առավել զարգացած հայերի ու իրենց՝ առավել հետամնաց թաթարների միջև սոցիալ-տնտեսական, կրթամշակութային, քաղաքական ոլորտներում: Ա. Աղաևը «չէր քաշվում հայտարարելու, թե հայերը չափազանց հառաջադիմելով, վազում են արագորեն և երբեք չեն մտածում իրենց հարևան թաթարների մասին: Այդ հանգամանքը պետք է գիտակցեն իրենք՝ հայերը և աշխատեն քարշ տալ իրենց հետ թաթարներին և կամ թաթարները պիտի կանգնեցնեն հայերի առաջխաղացումը այնքան ժամանակ, մինչև որ իրենք ևս կը հասնեն հայերին»[15]: Փաստորեն, թաթարների նպատակն էր կասեցնել հայերի առաջադիմությունը, որոնք մեղավոր էին այնքանով, որ իրենց ետևից չէին տանում թաթարներին, իսկ վերջիններս հայերի պատճառով էին հետ մնացել ազգովին

[13] Տե՛ս նույն նեղում:
[14] Տե՛ս Վարանդյան Մ., Հ. Թ. Դաշնակցության պատմություն, Ե., 1992, էջ 360:
[15] Տե՛ս Գյուլխանդանյան Ա., նշվ. աշխ., էջ 175:

քաղաքակրթվելու գործում: Իրականում թաթարները ոչ թե պետք է մեղադրեին հայերին՝ իրենց քաղաքակրթական հետամնացության համար, այլ ընդհակառակը՝ գիտակցեին, որ դարավերջին իրենց շրջանում ընթացող մշակութային շարժման ու դարասկզբին ազգային զարթոնքի համար ինչ-որ տեղ պարտական են նաև հայերին, քանի որ թաթարների զարգացումը տեղի ունեցավ Բաքվում և նրա շրջակայքում. հայտնի է, որ Բաքվի և հարող տարածքների յուրացման գործընթացը հիմնականում ղեկավարել են հայերը: Ինչպես նշում է Ա. Գյուլխանդանյանը, «Հայ, ռուս և եվրոպացի արդյունաբերողները, որոնք բազմաթիվ բուրգեր էին բարձրացնում նավթաբեր հողերի վրա՝ երկրի սիրտը ճեղքելու և նորանոր հարստություններ դիզելու համար, երբեք չէին մտածում, թե ղորանով հնարավորություն են ստեղծում թաթար ժողովրդի համար ազգայնորեն զարգանալու, սակայն նոցա կառուցած գործարաններում էր, որ առաջին անգամ զարթնում էր թաթարի ազգային գիտակցությունը և նոցա կառուցած դպրոցների մեջ էր, որ դրել-կարդալ էր սովորում ապագա թաթար մտավորականը»[16]:

Այնուամենայնիվ, մի կողմ թողնելով թաթարներին քաղաքակրթելու գործում հայերի ունեցած ներդրումների հարցի առանձին ուսումնասիրությունը, ինչպես նաև քաղաքակրթության ասպարեզում թաթարների հետ մնալու պատմական պատճառները, նշենք, որ նրանց շրջանում տարվող քարոզչական աշխատանքներն ի դեմս հայերի, վերջնականապես հանգեցրեցին թշնամու կերպարի ամրապնդմանը: Ցարական վարչակազմի սանձազերծած հայ-թաթարական ընդհարումներն ինչպես ցարական վարչակազմի, այնպես էլ թաթարական վերնախավի կողմից դիտվում էին որպես ամենակարճ ու հարմար ուղին՝ հայերի ու թաթարների միջև խախտված հավասարակշռության վերականգնման համար:

Այսպիսով, 1905-1906թթ. հայ-թաթարական ընդհարումները մեծապես խթանեցին թաթարների շրջանում ազգային ինքնության և հավաքական ինքնագիտակցության ձևավորմանն ու զարգացմանը՝ հիմք դառնալով հետագայում մեր տարածաշրջանում նրանց՝ տարածքային ու քաղաքական առումով հաստատվելու համար:

МЕЖЭТНИЧЕСКИЙ КОНФЛИКТ КАК ФАКТОР САМОИДЕНТИФИКАЦИИ ЭТНОСА
(на примере армяно-татарских столкновений в 1905-1906гг.)

ВАРДАНЯН Т. Р.

Резюме

Начиная с конца XIX в. процесс самоидентификации этноса, известного под разными этнонимами, претерпел ряд изменений в зависимости от факторов, доминирующих на данном этапе. На фоне культурного движения этот процесс носил в целом антихристианский,

[16] *Գյուլխանդանյան Ա., Ազգային շարժումների դրդապատճառները ԺԹ. դարում (Նոր մատենաշար, No 1, Փարիզ, 1939, էջ 17):*

антиимперский характер, объединяя тем самым всех мусульман России, но с усилением антиармянских настроений среди татар процесс их самоутверждения принял более интенсивный характер, а армяно-татарские столкновения 1905-06гг. послужили катализатором процесса их политико-регионального самоутверждения. В период этих столкновений татарские лидеры-националисты распространяли теорию об общенациональной выгоде от данного конфликта, т. к. образ врага в лице армян способствовал консолидации татар в единый этно-политический организм. Именно в этот период среди татар отчетливо выявилась также тенденция к территориальному единению и поиску Родины в Закавказье, т. е. процесс самоидентификации татар вступил в стадию регионального самоутверждения. Межэтнический армяно-татарский конфликт в Закавказье послужил фактором для самоидентификации татар, которые постепенно стали осознавать свою внутреннюю связь и этническую общность.